


«Ուրարտու» համալսարանի հիմնադրումը Ժամանակի հրամայական պահանջ էր



ՕՂՆԻԿ ՀԱՅՐԱՅԵՆՅԱՆ

Նախորդ դարի մայրամուտին անցկարագրելի դժվարությունների ծովից անցավ հայ ժողովուրդը հայրենի երկրում: 1988 թվականի ահալոր երկրաշարժը, Խորհրդային Միության և հասարակարգի փլուզումը, Հայաստանի ու Արցախի ազատագրական շարժումն ու պայքարը և անկախ հանրապետությանց հռչակումը, ապա ինքնապաշտպանական պատերազմը Ազերբեջանի զավթողական գրոհումների դեմ, Թուրքիայի կառավարության կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, ի վերջո, նոր կացության ձևավորումը և հասարակական հարաբերությունների ծնունդը

մեծ դժվարությունների մատնեցին ու նոր մարտահրավերների առջև կանգնեցրին հայրենի ժողովուրդին:

Երկրաշարժի ու պատերազմի բազում զոհեր, տնտեսության քայքայում, սոցիալական դժվարություններ, նոր հասարակական հարաբերություններ, հոգեկան ու մտային տվայտանքներ... Ահավասիկ այս պայմաններում, նորանկախ հանրապետության ծնունդին զուգընթաց, 1991 թվականի հոկտեմբերի 7-ին հիմնադրվեց և հանրության առջև իր դրո ները բացեց գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը: Կենսական ու հրամայական պահանջ էր գործնական հոգեբանության բնագավառում ունենալ անթերի գիտելիքներով ու հմտություններով զինված և գործնական հոգեբանության աշխատանքի փորձով լիցքավորված մասնագետներ, որոնք կկարողանային աջակցություն ցույց տալ բոլոր կարիքավորներին, ի մասնավորի, երկրաշարժից տուժած աղետյալներին:

Այդ ճգնաժամային օրերին, երբ հոգեբանական ու սոցիոլոգիական գործնական ձեռնարկումների ու միջոցառումների հույժ կարիքն էր զգացվում, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի կենսագործումը համարձակ քայլ էր, առաջներ իր տեսակի մեջ: Դուկտ.

«1999-ին հիմնադրել և ղեկավարում է «Հայաստանի գործնական հոգեբանների միավորում» հասարակական կազմակերպությունը»:

«1988-1993թթ. ղեկավարել է Սպիտակի երկրաշարժից տուժած, Գյումրիի Հայ Օգնության Միության կազմակերպած Հոգեբանական ծառայության կենտրոնը: Նույն տարիներին համակարգել է ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Վրաստանից հրավիրված հոգեբանների, հոգեբույժների մասնագիտական աշխատանքներն աղետի գոտում»:

Դուկտ. Սեդրակյանը 1995 թվականից ի վեր Հայաստանը ներկայացրել է ի Կանադայում, Ծվեդիայում, Չինաստանում և Գերմանիայում հոգեբանների միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև, եվրոպական հոգեբանական, ընտանեկան թերապիայի միջազգային ընկերակցության համագումարներում:

Դուկտ. Սեդրակյանի գրչին են պատկանում ավելի քան 140 գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական աշխատություններ և մենագրություններ:

2011թ. լույս տեսավ նրա «Ընտանիքի հոգեբանություն» մենագրությունը, որը ներկայացվել է ՀՀ պետական մրցանակի, ինչպես նաև թարգմանվել է ռուսերենի և դասավանդվում է Մոսկվայի համալսարանի հոգեբանական ֆակուլտետում:

«2005թ. «Ուրարտու» համալսարանի գործնական ուղղվածության, ինչպես նաև ուսումնագիտական ակտիվ գործունեության համար «Բարձր որակի և գործնական գործառնությունների» միջազգային ֆոնդի նախագահությունը (Ծվեդիա) Ս. Սեդրակյանին պարգևատրել է ոսկե շքանշանով», - գրում է «Կրթություն» շաբաթաթերթը:

«Ուրարտու» համալսարանը 2011 թվի նոյեմբերի 7-ին «Անվանակոչման հասարակական խորհրդի» կողմից համաժողովրդական քվեարկության և փորձագիտական գնահատման արդյունքում ճանաչվել է լավագույնը և արժանացել միջազգային չափանիշների որակ անվանակոչմանը:

Ջերմորեն շնորհավորելով Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հիմնադրության 20-ամյակը, ուսումնագիտական և մասնագիտական հանրօգուտ ծառայության նորանոր ձեռքբերումներ ու նվաճումներ և կանաչ ճանապարհ ենք մաղթում համալսարանի ղեկավորին, Կրթական խորհրդի բոլոր անդամներին, աշխատակազմին և ուսանողությանը:



Դուկտ. Սեդրակ Սեդրակյան

Սեդրակ Սեդրակյանը լինելով Միացյալ Նահանգներումսի Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Սանֆրանցիսկոյում և այլուր, «ուսումնասիրելով ամերիկյան գործնական հոգեբանության դպրոցի հետվճարված դասընթացը, սթրեսային խանգարում ունեցողների հոգեբանական, հոգեկարգավորման փորձը», անհրաժեշտ համարեց այն ներդնել Հայաստանում (ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հրատարակվող «Կրթություն» շաբաթաթերթը, հոկտ. 12, 2011, թիվ 46, Երևան):

Հայրենի անվանի հոգեբանները համախմբվելով գործնական հոգեբանության ջատագով, «Ուրարտու»-ի հիմնադիր ու վաստակաշատ դասախոս Դոկտ. Սեդրակ Սեդրակյանի շուրջընկեր կարողացան կարճ ժամանակամիջոցում «կայացնել նոր մասնագիտական ուղղվածությամբ և արդի չափանիշներին համապատասխան ուսումնական հաստատություն» («Կրթություն» շաբաթաթերթ): Հիրավի, «Ուրարտու»-ն հիմք ընդունելով միջազգային մի շարք հեղինակավոր ու անվանի համալսարանների ու գիտական կենտրոնների կրթական ծրագրերի բարեփոխությունների փորձը մշակեց ու կիրարկեց գործնական ուղղվածություն ունեցող ուսումնական ծրագրեր, որոնք ևս հնարավորություն ընձեռեցին ջրջանավարտների հի հոգեբանության տեսական գիտելիքները կիրարկել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Այսօրի քսան տարի անց, «Ուրարտու»-ն շնորհիվ իր ղեկավոր Դոկտ. Սեդրակ Սեդրակյանի անմնացորդ նվիրումի, հմուտ ու մասնագետ Կրթական խորհրդի նվիրված աշխատանքի, վարչական աշխատակազմի հոգատարության և ուսանողության աշխատասիրության հույժ կարևոր կրթօջախ է հանդիսանում: Համալսարանը վավերացված ու հավատարմագրված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից: «Համալսարանում իրականացվում է եռաստիճան ուսուցումի բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի ծրագրերով» («Կրթություն» շաբաթաթերթ): Այն բացառիկ ներդրում և հնարավորություն է Հայաստանի ուսումնակրթական կյանքում, որտեղ ուսանում են բացի հայրենի ուսանողներից նաև արտերկրից եկած ուսանողներ:

Դոկտ. Սեդրակ Սեդրակյանի ուսման, կրթական, հասարակական ու գիտական գործունեության մասին «Կրթություն» շաբաթաթերթում կարդում ենք. -

«Ավարտել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը, ապա՝ համալսարանի ասպիրանտուրան, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտը, ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի ընտանեկան և խմբային հոգեթերապիայի վերապատրաստման դասընթացը, Երևանի պետական համալսարանի դոկտորանտուրան»:

«Ընտրվել է միջազգային հոգեբանների խորհրդի անդամ (1990թ.), ֆրանսիական հոգեվերլուծության ասոցիացիայի անդամ (1996թ.), Կանադայի հոգեբանական ասոցիացիայի անդամ (1997թ.)»:

L & A

Legal Document Processing Center, INC

15 տարի Կալիֆորնիայում փաստաբանի հետ աշխատած մասնագետ



Legal Document Assistant LDA -549

Մեր ծառայություններն են՝

✓ ԹՈՇԱԿ, ԶԱՊԻ

Դրամական օժանդակության ծրագիր ներգալխածների համար, Պետական օգնություն՝ Medi-Cal, խնամակալ (HSS) կամ ուրիշ պետական նպաստների հետ կապված խնդիրներ

Եթե ձեր թոշակի, CAPI, Medi-Cal-ի կամ որևէ ուրիշ պետական նպաստի համար դիմումը մերժված է, կարող ենք բողոքագրել այդ որոշումը և ներկայացնել Ձեզ Դատարանում:

✓ Ամուսնալուծություն / ընտանիքի օրենք և դրա հետ կապված այլ խնդիրներ

Divorce and Family Law / Marital Settlement Agreement

✓ Գրավոր համաձայնագրություն բաժանվող ամուսինների միջև

✓ Նոտարական Ծառայություններ - Notary Public

✓ Ամուսնության վկայական Լոս Անջելեսում՝ մեկ օրվա նոթացքում - Same day Marriage

✓ Apostille and Authentication of Documents - Լիազորագիր

✓ Corporations (Standard or Expedited Filing)

✓ Կորպորացիայի բացում (Արագ կամ սովորական) Federal Tax Identification For your business

✓ Թարգմանչական աշխատանքներ (հայերեն, ռուսերեն)

Մենք փաստաբան չենք և չենք կարող տալ իրավաբանական խորհուրդ

818 / 599 - 9181

E-mail: valentina@lalegaldpc.com, WEBSITE: lalegaldpc.com,
1754 Victory Blvd., Glendale, CA 91201

Ունենք գրասենյակ նաև PASADENA-ում